ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԳԿ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 31.10.2017թ. ժամը 10-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Պետրոսյանը, Վ.Մկրտչյանը, Վ.Գսպոյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԳԿ-17/4» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **<<Օլանդա>> ՍՊԸ (ՀՀ, Մարալիկ, Գագարինի 29)**
2. **<<Ալեն-Էլեն>> ՍՊԸ (ՀՀ, Արմավիրի մարզ, գյ. Սարդարապատ 20 փ 2)**
3. **«Սենդա» ՍՊԸ (ք. Երևան, Հր. Քոչարի 8/16)**
4. **<<Գործ-555>> ՓԲԸ (ք. Երևան, Սիլիկյան 10)**
5. **<<Սմարթլայն>> ՍՊԸ (ք. Երևան, Վարդանանց 110)**
6. **<Ֆոտոն>> ՍՊԸ (ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյանի փ. 14շ., 21 բն.)**
7. **<<Օմնիա>> ՍՊԸ(Կոտայքի մարզ, գ.Գառնի, Մ.Նալբանդյան 31 տ)**
8. **<<ԴԱՌԵՍ>> ՍՊԸ (ք. Երևան, Գալշոյան փ, հար. 36շ., բն 1)**
9. **<<ՌԱՕ Մարս>> ՓԲԸ (ք. Երևան, Ռաֆֆու փող. 111)**

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ **<<ՌԱՕ Մարս>> ՓԲԸ** -ի հայտի:

<<ՌԱՕ Մարս>> ՓԲԸ -ի կողմից ներկայացված հայտի՝

1. Հավելված N 10-ում՝ տուժանքի մասին համաձայնագրում(հայտի ապահովում), ամսաթիվը նշված է ''27 նոյեմբերի 2017թ'', իսկ էլեկտրոնային ստորագրության ամսաթիվն է՝ 27.10.2017թ.:

2. Հավելված N 2.1-ը՝ մասնակցի իրական շահառուների մասին տվյալները, թերի են լրացված. լրացված չէ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/								
				<<Օլանդա>> ՍՊԸ	<<Ալեն-Էլեն>> ՍՊԸ	«Մենդա» ՍՊԸ	<<Գործ-555>> ՓԲԸ	<<Սմարթպոյնտ >> ՍՊԸ	<<Ֆոտոն>> ՍՊԸ	<<Օմնիա>> ՍՊԸ*	<<ԴԱՌԵՍ>> ՍՊԸ*	<<ՌԱՕ Մարս>> ՓԲԸ
1	չիրկիզվող պահարաններ	20	1300000	1080000	1078150	1666500		6250000			1280000	130000
2	գրապահարաններ	50	2250000	1562500	1832708.33	2582500	1715000		1806000			
3.	Աթոռ փայտյա	207	2070000	1894050	1707232.5				2275275	2024460		

* հանդիսանում են ԱԱՀ չվճարող

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը որոշեց՝

Կասեցնել նիստը և լիազոր մարմին հարցում ներկայացնել, պարզելու թե արդյոք մասնակցին մերժելու հիմք է հանդիսանում <<ՌԱՕ Մարս>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրում արձանագրված սխալը:

Հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ՖՆ-ից պարզաբանում ստանալու օրը՝ պատասխանի մինչև 17:00-ն ստանալու դեպքում, հակառակ դեպքում հաջորդ աշխատանքային օրը՝ ժամը նախօրոք համաձայնացնելով, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Պետրոսյան

_____ Վ.Մկրտչյան

_____ Գ.Գսպոյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԳԿ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 07.11.2017թ. ժամը 11-30-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Պետրոսյանը, Վ.Մկրտչյանը, Վ.Գսպոյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1.ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված պարզաբանման վերաբերյալ

Գրությունում նշվում է, որ <<ՌԱՕ Մարս>> ՓԲԸ-ի տուժանքի մասին համաձայնագրում նշված ամսաթիվը չի կարող խոչընդոտել անհրաժեշտության դեպքում մասնակցից հայտի ապահովման գանձման գործընթացին, և որ նման սխալների պատճառով հայտի անբավարար գնահատման համար հիմքեր առկա չեն:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի՝ նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ <<ՌԱՕ Մարս>> ՓԲԸ-ին տրամադրելով մեկ աշխատանքային օր ժամանակ՝ Հավելված N 2.1-ում լրացնելու օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը:
2. Հաջորդ նիստը հրավիրել 08.11.2017թ. ժամը 14.30-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

Այսօր էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Պետրոսյան

_____ Վ.Մկրտչյան

_____ Վ.Գսպոյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԳԿ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 08.11.2017թ. ժամը 14-30-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Պետրոսյանը, Վ.Մկրտչյանը, Վ.Գսպոյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1.Անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ

<<ՌԱՕ Մարս>> ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շտկված Հավելված N 2.1-ը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Մերժել <<ՌԱՕ Մարս>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 42-րդ կետը: Կարգի 45-րդ կետի համաձայն՝ <<ՌԱՕ Մարս>> ՓԲԸ-ի տվյալները ուղարկել լիազոր մարմին:

2. Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝
   1, 3 չափաբաժինների համար <<Ալեն-Էլեն>> ՍՊԸ-ին,
   2 չափաբաժնի համար <<Օլանդա>> ՍՊԸ-ին:

3. Ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝
   1, 3 չափաբաժինների համար <<Օլանդա>> ՍՊԸ-ին,
   2 չափաբաժնի համար <<Գործ-555>> ՓԲԸ-ին:

4. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, ժամը 12.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետերի՝ առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Պետրոսյան

_____ Վ.Մկրտչյան

_____ Վ.Գսպոյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան